

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

30.04..2011թ.

գ. Վ. Գետաշեն

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2011թ. հունվարի 21-ի թիվ 5-Ա կարգադրությունը՝ հանձնաժողովը նախագահությամբ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Իվան Ասատրյանի, անդամությամբ՝ աշխատակազմի քարտուղարության պետ Յուրա Թաթարյանի, աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետի տեղակալ Ավետիք Գասպարյանի, նույն վարչության ՀԳՄՏՍԳՀ բաժնի վարիչ Հրանդիկ Օհանյանի, աշխատակազմի զարգացման ծրագրերի բաժնի վարիչ Վարդուհի Մնացականյանի, աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վանիկ Պողոսյանի, մասնակցությամբ՝ աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի մասնագետ Աշոտ Հակոբյանի վարչական վերահսկողության շրջանակներում ուսումնասիրեց մարզի Վերին Գետաշեն համայնքի /համայնքի ղեկավար Ռուբիկ Ղուկասյան/ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը 2009-2011թթ.:

Ուսումնասիրվեցին ներքոհիշյալ բնագավառները՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման բնագավառում

Համայնքի ավագանին 2009թ. գումարել է 10 նիստ՝ ընդունելով 28 որոշումներ, 2010թ. գումարել է 6 նիստ՝ ընդունել 15 որոշում:

2011թ. անցած ժամանակահատվածում գումարել է 1 նիստ՝ ընդունել է 5 որոշումներ:

Համայնքի ղեկավարը ընդունել է որոշումներ՝ 2009թ.՝ 19-ը, 2010թ.՝ 16-ը, 2011թ.՝ 6-ը, արձակել է կարգադրություններ՝ 2009թ.՝ 31-ը, 2010թ.՝ 33-ը, 2011թ.՝ 9-ը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը 2009թ. արձակել է 3 հրամաններ, 2010թ. 2 հրամաններ, 2011թ. - 0:

Համայնքի ավագանու 28.01.2009թ. թիվ 2 նիստի թիվ 1 որոշմամբ հաստատվել է համայնքի բյուջեն:

Համայնքի զարգացման ծրագիրը հաստատվել է նույն նիստի թիվ 3 որոշմամբ՝ 2009-2012թթ. համար:

09.04.2009թ. թիվ 3 նիստում հաստատվել են տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը:

05.05.2009թ. թիվ 4 նիստով մայիսի 9-ի կապակցությամբ Հայրենական պատերազմի 21 վետերանի տրվել է 15000 ական դրամ:

08.05.2009թ. թիվ 5 նիստով հաստատվել է կանոնադրությունը, սակայն պետք է նշել, որ հարցը ավագանու իրավասությանը չէր, այն պետք է հաստատվեր համայնքի ղեկավարի որոշմամբ ըստ ՀՀ ՀՀՏԻՄ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի, նույն նիստի մի այլ որոշմամբ ավագանին հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողների՝ /նոր խմբագրությամբ/ պաշտոնների անձնագրերը, որը նույնպես համայնքի ղեկավարի իրավասությանն է, համաձայն ՀՀՀամայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի:

28.07.2009թ. ավագանու թիվ 8 նիստում որոշվել է 20000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ հատկացնել համայնքի մսուր մանկապարտեզի շենքի վերանորոգման համար, որպես ծրագրի ներդրում: 15.09.2009թ.թիվ 9 նիստում որոշվել է փոփոխություն կատարել համայնքի բյուջեում, ըստ որի համայնքի վարչական բյուջեից տարեսկզբի ազատ մնացորդը 5649.9 հազար դրամը տեղափոխվել է «Ճանապարհների տրանսպորտային նախագծերի» խումբ /5112 հաշվին/ :20.01.2010թ. ավագանու թիվ 1 նիստում հաստատվել է համայնքի 2010թ. բյուջեն՝ 71213.6 հազար դրամ եկամտային, 71213.6 հազար դրամ ծախսային մասով:

Հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը՝ ընդամենը 25 միավոր, որից 13-ը համայնքային ծառայողներ են, 9-ը մշակույթի տան աշխատողներ, մնացածը տեխնիկական սպասարկման անձնակազմը:

Նույն նիստի այլ որոշմամբ հաստատվել են տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Ավագանու 25.03.2010թ. թիվ 2 նիստի որոշմամբ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն 1900.0 հազար դրամի չափով:

5.05.2010թ. թիվ 3 նիստի որոշմամբ համայնքի Հայրենական մեծ պատերազմի 21 վետերանների տրվել է դրամական օգնություն 210.0 հազար դրամի չափով:

02.04.2010թ. թիվ 4 նիստում ավագանին փոփոխություն է կատարել համայնքի բյուջեում և համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի և դրույքաչափերի մեջ: Նույն նիստի թիվ 4 որոշմամբ համայնքի սոցիալապես անապահով 16 ընտանիքների տրամադրվել է 1700.0 հազար դրամի օգնություն:

20.08.2010թ. թիվ 6 նիստի որոշմամբ փոփոխություն է կատարվել համայնքի բյուջեում:

Ավագանու 17.02.2011թ. թիվ 1 նիստը հաստատել է համայնքի 2011թ. բյուջեն, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողների հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը:

Նույն նիստի թիվ 3 որոշմամբ սահմանվել են տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը, իսկ թիվ 4 որոշմամբ մսուր-մանկապարտեզը դարձել է ՀՈԱԿ:

Պետք է նշել, որ համայնքում չի պահպանվել ավագանու նիստեր գումարելու ոչ ուշ քան 2 ամսյա պարբերականությունը: Այսպես՝ ավագանու 2010թ. թիվ 4-րդ նիստը գումարվել է 02.04.2010թ., իսկ թիվ 5 նիստը գումարվել է 20.08.2010թ., ավագանու թիվ 6 նիստը գումարվել է 26.10.2010թ., իսկ 2011թ. թիվ 1 նիստը գումարվել է 17.02.2011թ.: Այսպիսով չի պահպանվել ՀՀ «ՏԻՄ» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Համայնքի ղեկավարի 07.01.2009թ. թիվ 1, 11.01.2010թ. թիվ 1, 10.01.2011թ. թիվ 1 կարգադրություններով հաստատվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակները, որտեղ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների գլխավոր կամ առաջատար մասնագետների փոխարեն նշվել է ֆինանսիստ, հաշվապահ, գյուղատնտես, գանձապահ, զին սեղանի վարիչ, սպորտ կազմակերպիչ և այլն: Փաստորեն չեն կատարվել ՀՀ ՏԿ նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի թիվ 205-Ա հրամանով /հավելված 82/ հաստատված Վ.Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոնների անվանումները:

Գյուղապետի 17.02.2010թ. թիվ 7 կարգադրությամբ ստեղծվել է գնումների և ծառայությունների մրցույթների անցկացման հանձնաժողով:

05.07.2010թ. թիվ 20 կարգադրությամբ խմելու ջրի մատակարարման հարցում անբավարար հսկողություն սահմանելու համար նկատողություն է հայտարարվել 4 աշխատակիցների, այդ թվում համայնքային ծառայողների, որոնց նկատմամբ կարգապահական տույժ պետք է կիրառեր համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը /ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, բացի այդ մինչև կարգապահական տույժ նշանակվելը խախտում թույլ տված համայնքային ծառայողից պահանջվում է բացատրություն/:

Համայնքի ղեկավարի 21.12.2009թ. թիվ 30 կարգադրությամբ դրամական պարգևատրումներ են ստացել աշխատակազմի բոլոր աշխատակիցները, այդ թվում՝ համայնքային ծառայողները, որոնց նկատմամբ /բացի աշխատակազմի քարտուղարից/ համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, խրախուսանքի կիրառելու իրավասությունն աշխատակազմի քարտուղարինն է:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում 2009-2011թթ. աշխատանքի ընդունելու, աշխատանքից ազատելու, արձակուրդներ տրամադրելու, խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու մասին ընդունված բոլոր իրավական ակտերը /որոշումներ, կարգադրություններ/ չունեն համապատասխան վերնագրեր, նախաբանում նշված չեն թե որ նորմատիվ իրավական ակտով են ղեկավարվել, չի նշվում աշխատանքային պայմանագիր կնքելու կամ պայմանագիրը լուծելու մասին, ինչպես նաև նշված չեն դրույթաչափերը:

Պետք է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի /ինչպես նաև համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի որոշումները, կարգադրությունները և հրամանները, որպես իրավական ակտեր չեն համապատասխանում <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

Այսպես՝ անհատական կամ լոկալ /ներքին/ իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի կամ ի կատարում է ընդունվում, որով իսկ չեն պահպանվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները: Իրավական ակտերում չեն նշվում թե՞ երբ են դրանք մտնում ուժի մեջ, այսինքն չի պահպանվել հիշյալ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը:

Ընդունված իրավական ակտերը չունեն վերնագրեր, կետեր, ենթակետեր կամ պարբերություններ, որով չեն կատարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթները:

Իրավական ակտերում կատարվող փոփոխությունները կամ լրացումները չեն իրականացվել կամ չեն ղեկավարվել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով:

Ի գիտություն տեղական ինքնակառավարման մարմինների հայտնվում է նաև, որ իրավական ակտերի գործողության դադարեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը իրականացվում են ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին ենթակետի դրույթներով:

Համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը /ավագանու կանոնակարգը, համայնքի զարգացման ծրագիրը, համայնքի բյուջեն, բյուջեում կատարված փոփոխությունները, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, բյուջեի տարեկան հաշվետվությունը, գույքի օտարման տրամադրելը կամ օտարելը, առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային կանոնները/ համաձայն <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի բնթակա են պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման /որից հետո 10-րդ օրը նոր դրանք մտնում են ուժի մեջ/:

2. Համայնքային ծառայության և գործավարության բնագավառներ

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի <<<< Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին>> թիվ 205-Ա հրամանով /հավելված թիվ 82/ մարզի Վ. Գետաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ են հաստատվել 14-ը, որից՝ 1-ը աշխատակազմի քարտուղար, 7-ը՝ գլխավոր մասնագետներ և 6-ը՝ առաջատար մասնագետներ:

ՀՀ ՏԿՆ 20.01.2009թ. թիվ 37-Ա հրամանով փոփոխություն է կատարվել ՀՀ ՏԿՆ 21.11.2006թ. թիվ 205-Ա հրամանով հաստատված հավելված 82-ի մեջ և աշխատակազմի քարտուղարը ընդգրկվել է գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախմբում:

3.07.2008թ. թիվ 11 որոշմամբ համայնքի ղեկավարը դասային աստիճաններ է շնորհել համայնքային ծառայողներին /առանց ատեստավորման/, որը ուժը կորցրած է ճանաչվել գյուղապետի 25.03.2009թ. թիվ 6 որոշմամբ, բայց նույն որոշմամբ դասային աստիճաններ է շնորհվել 7 գլխավոր մասնագետների /որոնց ատեստացիան տեղի է ունեցել 25.06.2008թ./:

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով չեղյալ համարել գյուղապետի 25.03.2009թ. թիվ 6 որոշումը, քանի որ կրկնց դասային աստիճան շնորհել է աշխատակազմի քարտուղարը:

Գյուղապետի 08.05.2009թ. թիվ 8 որոշմամբ համայնքային ծառայության առաջատար պաշտոնների ատեստացիա անցկացնելու համար ստեղծվել է հանձնաժողով, որոնց ատեստացիան անցկացվել է 29.05.2009թ. /6 մարդ/: Հիմք ընդունելով ատեստավորման հանձնաժողովի 29.05.2009թ. թիվ 2 որոշումը առաջատար մասնագետներին 04.06.2009թ. թիվ 18 որոշմամբ շնորհվել են համապատասխան դասային աստիճաններ: Նույն ծառայողներին իր 04.06.2009թ. թիվ 2 հրամանով դասային աստիճաններ է շնորհել նաև աշխատակազմի քարտուղարը: Ուստի համայնքի ղեկավարի 04.06.2009թ. թիվ 18 որոշումը նույնպես պետք է չեղյալ համարել ղեկավարվելով ՀՀ <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով:

Գյուղապետի 22.04.2011թ. թիվ 6 որոշմամբ փոփոխություն է կատարվել աշխատակազմի քարտուղարի և գլխավոր մասնագետների պաշտոնների անձնագրերի 6-րդ գլխի 10-րդ կետի <<Գիտելիքներ և հմտություններ>> բաժնում:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետներից մեկի /ծածկագիր՝ 2.3-7/ պաշտոնը թափուր է 21.03.2007 թվականից և այդ օրվանից մինչ օրս տվյալ պաշտոնը չի ընդգրկվել հաստիքացուցակներում, չի տրվել մրցույթի հայտարարություն, որով իսկ չի կատարվել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, այն է՝ որ համայնքային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում այդ պաշտոնն զբաղեցվում է մրցույթով:

Գյուղապետի 20.04.2011թ. թիվ 6 որոշմամբ փոփոխություն է կատարվել աշխատակազմի քարտուղարի և 2 գլխավոր մասնագետների պաշտոնների անձնագրերի 7-րդ՝ «Իրավունքներ և պարտականություններ» գլխի 11-րդ կետի մեջ, որտեղ պետք է ավելացնել զինակոչի, զորահավաքի, վարժական հավաքների մասին պարտականություններ: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե փոփոխությանը այլ լրացումներին, ուստի անհրաժեշտ է ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածով ուժը կորցրած ճանաճել գյուղապետի 20.04.2011թ. թիվ 6 որոշումը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով աշխատակազմի քարտուղարի և գլխավոր մասնագետների 2-ի պաշտոնների անձնագրերի 7-րդ գլխի 11-րդ կետի «Լ» ենթակետից հետո լրացնել «Լա», «Լբ», «Լգ», «Լդ», ենթակետերով, այնուհետև ինչպես տեքստում:

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթով անհրաժեշտ է մշակել, հաստատել և գործողության մեջ դնել համայնքի ավագանու և գյուղապետի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը:

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ կետի և 40-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով մշակել, հաստատել և պետական գրանցման ենթարկելուց հետո գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները:

Համայնքային ծառայության կադրերի գործերը վարվում են ՀՀ ՏԿՆ 7.11.2006թ. թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի համապատասխան: Այս հարցում որոշ թերություններ մեր կողմից առաջարկվեց կարճ ժամկետում վերացնել: Միաժամանակ զգուշացվեց աշխատակազմի քարտուղարին, որ գլխավոր պաշտոն և գլխավոր մասնագետները պետք է ՏԿՆ հայտարարագրեն իրենց գույքը և եկամուտները, քանզի հայտարարագիր չներկայացնելը ՀՀ «ԾՄ» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն պաշտոնից ազատելու հիմք է:

Գործավարության ուսումնասիրությունից պարզվեց, որ քաղաքացիներից ստացվել են դիմումներ՝

2009թ. – 37

2010թ. – 48

2011թ. – 0

Վերադաս և այլ կազմակերպություններից մուտք են եղել գրություններ՝

2009թ. – 27

2010թ. – 60

2011թ. – 23

Համայնքից ելքագրվել են գրություններ և այլ թղթակցություններ՝

2009թ. – 54

2010թ. – 121

2011թ. – 10

Ելքագրված և մուտքագրված գրությունները ինչպես նաև քաղաքացիների դիմումները պահվում են առանձին թղթապանակներում:

3. Համայնքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը, ենթակառուցվածքը և սեփականությունը

Վերին Գետաշեն համայնքի բնակիչները ներգաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Խաստուտ գյուղից 1828թ: Նախկին Վերին Ադիաման կոչվող գյուղը 1947թ. վերանվանվել է Վերին Գետաշեն: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 2065մ բարձրության վրա: Այն մարզկենտրոնից գտնցում է 27 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 130 կմ: Գյուղացիներն հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ, որոշակի քանակությամբ բնակիչներ մեկնում են արտագնա աշխատանքի:

Համայնքի բնակչության թիվը 5044 է, այդ թվում մշտապես ներկա՝ 5004, ժամանակավոր բացակայող՝ 40, երկարատև բացակայող՝ 87-ը: Բնակչության ընդհանուր թվից տղամարդիկ են 2478-ը, կանայք՝ 2566-ը, ընդամենը զբաղվածներ են 2349-ը, այդ թվում գյուղատնտեսական աշխատանքներով՝ 2111, այլ բնույթի ոչ գյուղատնտեսական աշխատանքներով՝ 238-ը: Համայնքն ունի 1670 տնտեսություն, որոնցից 20-ը ժամանակավոր բացակայող:

Համայնքի վարչական տարածքը 3740 հա է, կան 803 առանձնատներ: Գյուղապետարանում, դպրոցներում, բուժկետում և մշակույթի կենտրոնում աշխատում է շուրջ 140 մարդ: Զբաղվածության կենտրոնում գրանցված են շուրջ 120 գործազուրկներ: Բնակչության ընդհանուր թվից թոշակառուներ են 545-ը, հաշմանդամներ՝ 96-ը, <<Փարոս>> համակարգում են 224-ը:

Համայնքի բնակիչներն ունեն 2328 խոշոր եղջերավոր անասուններ, որից կովեր՝ 1165, կան 131 գլուխ խոզեր, 611 գլուխ ոչխարներ, 2085 թև թռչուններ, 451 մեղվաընտանիքներ:

Համայնքի տարածքում գործում են առևտրի 8 կետեր: Սպասարկման օբյեկտներ չկան: Համայնքում գործում է 2 հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 750 աշակերտ:

Համայնքի ղեկավարն է Ռուդիկ Ղուկասյանը, ով նշված պաշտոնում աշխատում է 1996թ. նոյեմբերից: Աշխատակազմի թվաքանակը ըստ հաստիքացուցակի 25-ն է, ավագանին՝ 11: Համայնքի սեփականությունն են հանդիսանում գյուղապետարանի երկհարկանի շենքը, մշակույթի տունը և մանկապարտեզի շենքը:

Գյուղապետարանն ունի ծառայողական <<Գագ-3110>> մակնիշի 1 ավտոմեքենա, որը ձեռք է բերվել 1998թ: Իր հաշվեկշռում գյուղապետարանը տեխնիկա և գործիքներ չունի: Որպես մասնավոր սեփականություն բնակիչներն ունեն 1 կոմբայն, 3 թրթուռավոր, 10 անիվավոր տրակտորներ, 12 միավոր գործիքներ, 82 բեռնատար ավտոմեքենա, որից 35-ը ինքնաթափ: Համայնքի բնակիչներն ունեն շուրջ 120 մարդատար ավտոմեքենա:

Համայնքի բնակիչների առողջապահության խնդիրները բավարարում է բուժամբուլատորիան, որը հազեցած է ժամանակակից բուժօգնություն ման գործիքներով: Շենքային պայմանները բավարար են: Համայնքում

առողջապահական ծրագիր են իրականացնում միջազգային <<Ամբոր>> և <<Նովա>> կազմակերպությունները:

Բուժամբուլատորիան /տնօրեն Արսեն Ղուկասյան/ ունի վերապատրաստված 1 ընտանեկան բժիշկ, 1 մանկաբույժ և 12 բուժքույրեր, որոնցից 2-ը սպասարկում են հարևան Մադինա համայնքի ազգաբնակչությանը: Համայնքի բնակչությանը մատուցվում են եկեղեցական ծառայություններ: Համայնքում գտնվում է Սուրբ Աստվածին եկեղեցին, որը մասնակի վերանորոգման կարիք ունի:

2009թ. Արմաղան լեռան վրա համազյուղացի Ռուդիկ Մխիթարյանի անձնական միջոցներով կառուցվել է Սուրբ Հարություն եկեղեցին:

Կոմունալ տնտեսություն, տրանսպորտ, կապ

Համայնքում գազամատակարարումը իրականացվում է պատշաճ մակարդակով: Բնական գազից օգտվում է բնակչության շուրջ 95%-ը: Համայնքն ունի կանոնավոր գործող փոստի բաժանմունք, բնակչությունը հնարավորություն ունի դիտել 10 հեռուստաալիք:

Գյուղում չկա կենտրոնացված կոյուղագիծ: Դրան փոխարինում են սեփական միջոցներով կառուցված հորերը:

Աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչ Գնել Խաչատրյանի հետ կնքված պայմանագրով, ըստ որի նրա կողմից իր տեխնիկայով տեղափոխում է աղբը՝ տարեկան 1.225 դրամ գումարով և կատարում է փողոցները ձյունից մաքրելու աշխատանքները 875 հազար դրամով:

Համայնքում փողոցային լուսավորության ցանցի ընդհանուր երկարությունը 14 կմ է, որը կառուցվել է 2010թ: Համայնքում լուսավորության հետ կապված ծախսերը իրականացնում է համայնքապետարանը իր բյուջեի հաշվին, ավագանու որոշմամբ:

Համայնքից մինչև շրջկենտրոն 7 կմ է: Բնակչությունը շրջկենտրոն է մեկնում օրական 3 անգամ, գործող ավտոբուսային երթևեկությամբ:

Համայնքում չափազանց վատ է ճանապարհների վիճակը: Ն.Գետաշեն համայնքից մինչև Վերին Գետաշենի ծայրամասը տանող ճանապարհի երկարությունը շուրջ 4 կմ է, որը անմխիթար վիճակում է, ձմռանը դառնում են գրեթե անանցանելի և կարիք ունի ասֆալտապատման: Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը 22 կմ է: Ուսումնասիրվող ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի փոսայցվել, բարեկարգվել է շուրջ 15 կմ ճանապարհ, որի համար ծախսված գումարները հատկացվել են համայնքային բյուջեից, ավագանու որոշմամբ:

2008թ. բարերարների միջոցով կառուցվել են գերեզմանոց տանող ճանապարհի աստիճանները՝ հեշտացնելով բնակչության այցելությունները գերեզմանատուն:

Կրթություն, մշակույթ, գրադարան

Համայնքում նախադպրոցական դաստիարակության ոլորտում ծառայություններ չեն մատուցվում: Մինչև 2009թ. գործել է 120 երեխայի համար տիպային նախադպրոցական համալիր, սակայն ֆինանսական անհրաժեշտ միջոցների բացակայության, վերանորոգում չիրականացնելու պատճառով 2009թ. հունվարից ընդհանրապես չի գործում և կարիք ունի հիմնանորոգման: Գյուղում կան

նախադպրոցական տարիքի շուրջ 200 երեխաներ համայնքը մեծ է և մանկապարտեզի վերագործարկումը անհրաժեշտ պահանջ է:

Սևան Հովհաննիսյանը, բարձրագույն և մանկավարժական կրթությամբ, տնօրենի պաշտոնում է 2007 թվականից:

Մշակույթի կենտրոնը երկհարկանի, 2004թ. վերանորոգված կառույց է, որն հաստիքացուցակով ունի 9 աշխատող և մեծապես նպաստում է գյուղի հոգևոր ու մշակույթային կյանքի աշխուժացմանը: Մշակույթի կենտրոնի դահլիճը կահավորված է, ունի շուրջ 400 տեղանոց դահլիճ: Գործում է «Ալաշկերտ» ազգագրական երգի-պարի համույթը շուրջ 70 սաներով, որը հանրապետական տարբեր փառատոնների հաղթող ու մրցանակակիր է, պարգևատրվել է տարբեր դիպլոմներով ու պատվոգրերով, մեծ ճանաչում ունի մարզում ու հանրապետությունում: Համույթի կազմակերպիչը եղել է ներկայիս գրադարանի վարիչը՝ Խանում Դավթյանը:

Համայնքի «Հայ ասպետ» հեռուստախաղի մասնակիցները դուրս են եկել հանրապետական մրցույթի կիսաեզրափակիչ փուլ: Մշակույթի տանը գործում են բազկամարտի, շախմատի և ծանրամարտի խմբակներ, որոնցում ընդգրկված են շուրջ 160 երեխաներ:

Մշակույթի տանը արդեն 2-րդ տարին է, անցկացվում է ՀՀ վաստակավոր մարզիչ Լ. Բարեյանի հիշատակին նվիրված ավանդական հուշամրցաշարը, որը տարածաշրջանային է դարձել: Մշակույթի տունը ջեռուցված չէ, դահլիճի բեմը չունի վարագույրներ, չկա անհրաժեշտ քանակությամբ գույք և կահավորում: Համայնքային գրադարանը /վարիչ Խանում Դավթյան, ունի միջնակարգ մասնագիտական կրթություն, պաշտոնում է 1986թ./ գտնվում է մշակույթի տանը, ունի նորմալ շենքային պայմաններ, 13562 կտոր գրականություն, շուրջ 450 ընթերցող: Գրադարանում կազմակերպվում են ամենատարբեր բնույթի հետաքրքիր միջոցառումներ, հանդիպումներ, գրքերի քննարկումներ և դարձել է համայնքի բնակչության հոգևոր պահանջմունքների բավարարման կարևորագույն օղակը:

Համայնքում խմելու ջուրը մատակարարվում է բնական աղբյուրներից՝ միաժամանակ և ինքնահոս եղանակով: Խմելու ջրի ներքին ցանցը շուրջ 25 կմ երկարություն ունի: Կառուցված է 60-ական թվականներին և կարիք ունի լիովին վերանորոգման: Խմելու ջուրը բավարարում է բնակչության պահանջը: Շուրջ 650 բնակիչներ ունեն անհատական ջրի ծորակներ:

Ոռոգման ջրագծի ընդհանուր երկարությունը 14 կմ է, որը խիստ վերանորոգման կարիք ունի, լիովին բավարարում է բնակչության պահանջը, սակայն ջրատարները կարիք ունեն վերանորոգման:

Անասնաբուժական ծառայությունը իրականացվում է 2 անասնաբույժերի միջոցով: Համաճարակների դեպքեր չեն եղել: Վ.Գետաշենը միջհամայնքային միավորման անդամ է:

4. Համայնքի ղեկավարի գործունեությունը հողաշինարարության և հողօգտագործման բնագավառում

Համայնքը՝ համայնքի վարչական սահմանների ներսում ունի համայնքային սեփականություն հանդիսացող 913.3 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից վարելահող՝ 104.6 հա, խոտհարք՝ 49.9 հա, արոտ՝ 591.1 հա այլ հողեր՝ 167.6 հա:

Նախորդ տարիներին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողատեսքերից վարձակալությամբ է տրամադրվել 28.0 հա վարելահող՝ 2009թ. համայնքային սեփականություն հանդիսացող չվարձակալված վարելահողերի, արոտների և խոտհարքերի համար ապրիլի 29-ին տրվել է հայտարարություն հողերը մրցութային կարգով վարձակալելու համար, սակայն մրցույթին մասնակցելու համար հայտ չի ներկայացվել:

Չվարձակալված գյուղատնտեսական հողատեսքերի ընդհանուր վարձավճարը կազմում է 1210.3 հազար դրամ:

2009թ. բյուջեով վարձավճար է նախատեսվել 187.0 հազար դրամ, գանձվել է 187.0 հազար դրամ կամ 100% հողի հարկ է նախատեսվել 12526.0 հազար դրամ, գանձվել է 11916.4 հազար դրամ կամ 95.1%:

2010թ. մարտի 31-ին տրվել է հայտարարություն չվարձակալված հողատեսքերի համար, հայտեր չլինելու պատճառով նորից չի վարձակալվել:

2010թ. բյուջեով հողի վարձավճար է նախատեսվել 187.0 հազար դրամ, գանձվել է 218.5 հազար դրամ կամ 117.5%, հողի հարկ է նախատեսվել 5943.5 հազար դրամ գանձվել է 6906.0 հազար դրամ կամ 116.2%:

2011թ. ապրիլի 30-ի դրությամբ չվարձակալված գյուղատնտեսական հողատեսքերի համար տրվել է հայտարարություն հողերը մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ, սակայն ուսումնասիրության պահին հայտ չէր ներկայացվել:

2011թ. բյուջեով հողի վարձավճար է նախատեսվել 187.0 հազար դրամ, գանձվել է 3000 դրամ կամ 1.6%, հողի հարկ է նախատեսվել 5460.0 հազար դրամ գանձվել է 1174.4 հազար դրամ կամ 21.5%:

Ուսումնասիրության պահին հողի վարձավճար է գանձվել 69.6 հազար դրամ կամ 37.2%, հողի հարկ է գանձվել 1913.2 հազար դրամ կամ 35.0%:

Վերը նշված տարիների համար արոտի վարձավճար չի գանձվել, սակայն օգտագործվում է համայնքի բնակիչների կողմից:

5. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսների բնագավառում

Վ. Գետաշենի համայնքում, եթե մինչև 2009թ. սեփական եկամուտների կատարողականը տատանվել է 46.2-ից 54.1%-ի սահմաններում, գումարային արտահայտությամբ 3899.7 հ/դրամից հասնելով 10267.6 հ/դրամի, ապա 2009թ. սեփական եկամուտների մուտքերը կազմել են 16444.7 հ/դրամ կամ պլանը կատարվել է 114.2%-ով, իսկ 2010թ.՝ 12808.6 հ/դրամ կամ 163.8%-ով, ինչը գերազանցել է մարզի համապատասխան /101.6 և 98.4%/ ցուցանիշները: Դրական աշխատանքներ են տարվել գույքային հարկերի նախորդ տարիներին կուտակված

ապառքների կրճատման ուղղությամբ. 2008թ. հունվարի 1-ի դրությամբ եղած 17454.7 հ/դրամ հողի հարկի գծով ապառքները նվազել և առ 1.04.2011թ. դրությամբ կազմում են 1872.0 հ/դրամ, գույքահարկինը՝ 220.0 հ/դրամից 1804.5 հ/դրամ:

2011թ. 1-ին եռամսյակում սեփական եկամուտների կատարողականը կազմել է 34.6%, ինչը բարձր է մարզի 18.4% միջինից:

Բերենք 2009-2010թթ. և 2011թ. 1-ին եռամսյակում համայնքի բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի առ 1.04.11թ.	%
Գույքահարկ	1466.1	3975.7	243.9	1466.1	5410.9	369.1	2000.0	1469.9	73.5
Հողի հարկ	12526.0	11916.4	95.1	5943.5	6906.0	116.2	5460.0	1174.4	21.5
Տեղական տուրքեր	220.0	334.1	151.8	220.0	276.4	125.5	220.0	72.0	32.7
Հողի վարձավճար	187.0	218.5	116.6	187.0	213.7	114.4	187.0	3.0	1.6
Վարչակ. գանձում.	-	-	-	-	1.5	-	-	-	-
Ընդ. սեփ. եկամուտներ	14400.1	16444.7	114.2	7816.7	12808.6	163.8	7867.0	2719.3	34.6
Պատ. լիազորութ.	1459.2	1459.2	100.0	1459.2	1200.0	82.2	1200.0	-	-
Դոտացիա	50675.5	50675.5	100.0	61937.7	61937.7	100.0	62670.3	15667.6	25.0
Ընդամենը եկամուտներ	66534.8	68579.4	103.0	71213.6	75946.3	106.6	71737.3	18386.9	25.6

Համայնքի 2009թ. տարեկան ճշտված բյուջեով եկամուտներ է նախատեսվել 66534.8 հ/դրամ, փաստացի տարվա ընթացքում հավաքագրվել է 68579.4 հ/դրամ, կամ պլանը կատարվել է 103.0%-ով, ըստ որում սեփական եկամուտների 14400.1 հ/դրամ պլանի դիմաց փաստացին կազմել է 16444.7 հ/դրամ կամ կատարվել 114.2%-ով, գումարային արտահայտությամբ ապահովվելով ամենաբարձր փաստացի մուտքը վերջին 8-10 տարում: Բյուջեով նախատեսված 70534.8 հ/դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 56976.2 հ/դրամ կամ փաստացի ծախսերը կատարվել են 80.8%-ով:

Համայնքի 2010թ. տարեկան բյուջեով եկամուտներ է նախատեսվել 71213.6 հ/դրամ, փաստացի տարվա ընթացքում հավաքագրվել է 75946.3 հ/դրամ, կամ պլանը կատարվել է 106.6%-ով, ըստ որում սեփական եկամուտների 7816.7 հ/դրամի դիմաց փաստացին կազմել է 12808,6 հ/դրամ կամ պլանը կատարվել է 163.8 հ/դրամ: Գույքահարկի գծով աննախադեպ մուտքեր են եղել՝ նախորդ տարվա ապառքների գանձման և նոր փոխադրամիջոցներից գանձվող մուտքերի հաշվին: 2010թ. բյուջեում պետք է ճշտումներ կատարվեին, ինչը չի արվել: 2009-2010թթ. սեփական եկամուտների փաստացի մուտքերը, փաստացի ընդամենը եկամուտներում, կազմել են համապատասխանաբար 24.0% և 16.9%, մնացած 76.0-ից 83.1%-ը կազմում են ՀՀ պետբյուջեից ստացված դոտացիաներն ու պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցները: Բյուջեով նախատեսված 74901.6 հ/դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 93.1%-ով: 2011թ. 71737.3 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց 2011թ. 1-ին եռամսյակում փաստացին կազմել է 18386.9 հ/դրամ /25.6%/, ըստ այդմ՝ սեփական եկամուտները՝ 7867.0 հ/դրամի դիմաց 2719.3 հ/դրամ /34.6%/, մարզի 18.4% միջինի դիմաց: Փաստացի բյուջետային ծախսերը

/80096.4 հ/դրամի դիմաց 8359.1/ կատարվել են 10.4%-ով, ընդ որում ֆոնդային բյուջեից ծախսեր չեն կատարվել:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ վարչական բյուջեի հաշվարկային հաշվի մնացորդը կազմել է 10193.8 հ/դրամ, ֆոնդային բյուջեինը՝ 19837.2 հ/դրամ:

Հողի հարկի բազան համայնք է փոխադրվել 2007թ. աշնանը: Առ 1.01.2008թ. դրությամբ այդ հարկատեսակի գծով ապառքը կազմել է 9849.2 հ/դրամ, դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը՝ 7605.2 հ/դրամ /երկուսը միասին՝ 17454.4 հ/դրամ/: Այդ ապառքներից 2009թ. պլանում ներառվել են 7641.0 հ/դրամ, 2010թ.՝ 1055.0 հ/դրամ, 2011թ.՝ 500.0 հ/դրամ: Ձեռնարկված միջոցների, ապառքների կրճատման շնորհիվ առ 1.04.2011թ. դրությամբ հողի հարկի գծով ապառքները կազմել են 1014.5 հ/դրամ, դրանց նկատմամբ հաշվարկված տույժերը՝ 2309.2 հ/դրամ /երկուսը միասին՝ 3323.7 հ/դրամ/: <<Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքով 235 մարդու տրվել է 2294.0 հ/դրամի արտոնություն:

Համայնքում հողի հարկի տարեկան հաշվարկային գումարը կազմել է 4907.0 հ/դրամ որչափ և ներկայացված է դոտացիաների հաշվարկման համար:

Գույքահարկի գծով 2009-2010թթ. պլան է սահմանվել 1466.1 հ/դրամ, 2011թ.՝ 2000.0 հ/դրամ, այն դեպքում, երբ փաստացի մուտքերը 2-ից 3 անգամ գերազանցել են պլանայինին: Համենայն դեպս, 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ, այդ հարկատեսակի գծով առկա էին դեռևս 1804.5 հ/դրամ ապառքներ, որից տույժեր՝ 570.0 հ/դրամ:

2009-2011թթ. տեղական տուրքերի գծով սահմանվել են 220.0-ական հազար դրամ պլաններ, այդ թվում՝ համայնքի տարածքում, 8 առևտրական կետերում: Ոգելից խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար 20.0-ական հ/դրամ /ընդամենը 160.0 հ/դրամ/, համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների շինարարության, շինությունների վերականգնման, արդիականացման, քանդման թույլտվության համար՝ 60.0 հ/դրամ:

2009-2011թթ. ավագանու որոշումներով, գյուղապետարանի աշխատակազմում պահվել են 26, մշակույթի կենտրոնում՝ 9 հաստիքային միավորներ, ամսական 18.0-ից 130.0 հ/դրամի սահմաններում /գյուղապետինը բարձր լեռնայինով՝ 218.0 հ/դրամ/, որոնց համար տարեկան հաշվարկվել է 26500.0 հ/դրամ աշխատավարձ, 6022.0 հ/դրամ սոցվճար և 1800.0 հ/դրամ խրախուսման ֆոնդեր: Այդ խրախուսանքներից, 2009-2010թթ. սեփական եկամուտների պլանները կատարելու համար, գյուղապետարանի աշխատողներին հաշվարկվել և վճարվել է 1800.0-ական հ/դրամ /աշխատողների ամսական դրույքաչափերի սահմաններում/:

Գույքային հարկերի անդորրագրերում նախորդ տարիների ապառքների և ընթացիկ տարվա գանձումները ցույց են տրվել նույն սյունակում, չեն տարանջատվել դրանք, ինչպես նաև գանձված տույժերը:

Վարչական բյուջեի 4213 <<կոմունալ ծառայություններ>> հոդվածով, 2009թ. կատարվել են 1225.0 հ/դրամ փաստացի ծախսեր: Վ.Գետաշենի բնակիչ Գ.Գալստյանի հետ կնքված 21.01.2009թ. թիվ վգ 28/29 պայմանագրի համաձայն, քաղաքացին պարտավորվել է իր սեփական տրանսպորտով և տեխնիկայով կատարել փողոցների ձնից մաքրման և աղբահանության աշխատանքներ, ամսական 175.0 հ/դրամ վճարով, տարեկան 2100.0 հ/դրամ, որից 875.0 հ/դրամը ձևակերպվել է 4251 <<շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում>> հոդվածով:

30.12.2009թ. հանձնաժողովի կողմից կազմած ակտում նշվել են, որ պայմանագրի պայմանները կատարվել են պատշաճ մակարդակով: Կան հանձման-ընդունման արձանագրություններ, գանձապետական համապատասխան փաստաթղթեր: Վճարումները կատարվել են ամսական կտրվածքով, պետքանկում բացված հատուկ հաշվին, 10% եկամտահարկի պահումներից հետո:

Այդ աշխատանքները, նույն բնակչի կողմից, իրականացվել են նաև 2010թ. համաձայն 11.01. 2010թ. թիվ վգ 08/4 պայմանագրի և, համապատասխան /վերը նշված/ փաստաթղթերի առկայության: 4213 հողվածով վճարում է կատարվել 1225.0 հ/դրամ և 4251 հողվածով՝ 875.0 հ/դրամ:

2009թ., 4264 <<տրանսպորտային նյութեր>> հողվածով, կատարվել են 2500.0 հ/դրամ փաստացի ծախսեր, որից բենզին՝ 1900.0 հ/դրամ և պահեստամասեր՝ 600.0 հ/դրամ, 2010թ. ընդամենը 1999.8 հ/դրամ, որով ձեռք է բերվել միայն բենզին:

4229 <<այլ նպատակներ բյուջեից>> հողվածով, ավագանու որոշումներով, սակավ ապահովված ընտանիքներին տրվել են ֆինանսական օգնություններ, 2009թ.՝ ~~3000.0~~ և 2010թ.՝ 4260.0 հ/դրամ:

4251 <<շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում>> հողվածով 2010թ. կատարվել են 6040.0 հ/դրամ փաստացի ծախսեր, որից՝

ա/ 875.0 հ/դրամը ճանապարհների ձմեռային պահպանության նպատակով /ինչպես ցույց տրվեց վերևում, այդ գումարը վճարվել է Գ.Գալստյանին, համաձայն վգ 08/4 պայմանագրի, կա համապատասխան փաստաթղթեր/.

բ/ համազյուղացի Դ. Գևորգյանի հետ 25.07.2010թ. կնքված թիվ վգ 08/38 պայմանագրի, հանձնաժողովի կողմից կազմած ակտի, 09.09.2010թ. թիվ 17, 19 հանձման-ընդունման արձանագրությունների, գանձապետական համապատասխան փաստաթղթերի համաձայն, քաղաքացին պարտավորվել և իր սեփական տեխնիկայով իրականացրել է գյուղամիջյան ճանապարհների փոսայցման աշխատանքներ, որի դիմաց, երկու նվազով փոխանցվել է 2470.0 և 655.0 հ/դրամ /ընդամենը 3125.0 հ/դրամ/, 10% եկամտահարկը ներառյալ.

դ/ համազյուղացի Ռ. Գևորգյանի հետ 01.10.2010թ. կնքված թիվ 08/44 պայմանագրի, հանձնաժողովի կողմից կազմած ակտի, գանձապետական համապատասխան փաստաթղթերի համաձայն, քաղաքացին պարտավորվել և իր սեփական տեխնիկայով իրականացրել է խմելու ջրի հին և նոր ընթացիկ նորոգման, գործող թվով 13 կապտածների և 2 օրվա կարգավորիչ ջրամբարների /ՕԿՁ/ մաքրման աշխատանքներ, որի համար վճարվել է 2040.0 հ/դրամ, 10% եկամտահարկը ներառյալ:

2009թ. ավագանու տարբեր որոշումներով, ֆոնդային բյուջեի հաշվին կատարվել են 15225.5 հ/դրամ փաստացի ծախսեր:

<<Ազգ>> թերթի 9.06.2009թ. թիվ 105 համարում կա հայտարարություն համայնքում՝

ա/ տրանսպորտային վառելանյութի և պահեստամասերի ձեռքբերման, խմելու ջրի հին ջրագծի վերանորոգման

գ/ խմելու ջրի ջրամբարի շուրջ կառուցվող մետաղական ցանկապատի

դ/ փողոցների առուների /կիսախողովակների տեղադրմամբ/ ընթացիկ նորոգման

ե/ կոմունալ ծառայությունների իրականացման նպատակով:

Գյուղի փողոցների առուների կապիտալ շինարարական աշխատանքների հայտարարված մրցույթին ներկայացվել է 1 հայտ, հաղթող է ճանաչվել <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ, որի հետ 12.11.2009թ. կնքվել է թիվ ՄԳ-ՎԳԳ 08/41 պայմանագիրը: Նախագծման աշխատանքները կատարվել է <<Արևադարձ>> ՍՊԸ, ըստ որի դրանց արժեքը կազմել է 7987.4 հ/դրամ: 10.12.2009թ. թիվ 53 հանձման-ընդունման արձանագրության, 2009թ. թիվ 1 կատարողական ակտի /կցվում է/, գանձապետական համապատասխան փաստաթղթերի հիման վրա, <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ-ին վճարվել է 7757.4 հ/դրամ, որը ձևակերպված է 5112 <<շենքերի և շինությունների կառուցում>> հոդվածով:

Գյուղի խմելու ջրի ջրամբարի շուրջ կառուցվող մետաղական ցանկապատի կառուցման վերաբերյալ հայտարարված մրցույթին հայտ է ներկայացրել և հաղթող է ճանաչվել <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ-ն, որի հետ 28.08.2009թ. կնքվել է թիվ ԳՄ ՎԳԳ 08/38 պայմանագիրը: Նախագծման աշխատանքները կատարել է <<Արևադարձ>> ՍՊԸ:

23.09.2009թ. թիվ 46 հանձման-ընդունման արձանագրության, 2009թ. սեպտեմբերի թիվ 1 կատարողական ակտի /կցվում է/, գանձապետական համապատասխան փաստաթղթերի համաձայն, <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ-ին վճարվել է 2779.0 հ/դրամ, որը ձևակերպված է 5112 <<շենքերի և շինությունների կառուցում>> հոդվածով: Այսպիսով, ֆոնդային բյուջեի 5112 <<շենքերի և շինությունների կառուցում>> հոդվածով 2009թ. փաստացի ծախսերը կազմում են 10536.4 հ/դրամ:

2009թ. 5113 <<շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածով փաստացի ծախսը կազմում է 3693.8 հ/դրամ: Գյուղի խմելու ջրի հին ջրագծերի վերակառուցման համար հայտարարված մրցույթին հայտ է ներկայացրել միայն <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ, որի հետ 27.06.2009թ. կնքվել է թիվ ԳՄ ՎԳԳ 08/34 պայմանագիրը: Նախագծման աշխատանքները կատարել է <<Արևադարձ>> ՍՊԸ /3767.5հ/դրամ նախագծային արժեքով/: 13.07.2009թ. թիվ 32 հանձման-ընդունման արձանագրության, 2009թ. հուլիսի թիվ 1 կատարողական ակտի /կցվում է/, գանձապետական համապատասխան փաստաթղթերի հիման վրա, ՍՊԸ-ին վճարվել է 3693.8 հ/դրամ գումար:

2009թ. 5122 <<վարչական սարքավորումներ>> հոդվածով, համաձայն 11.08.2009թ. <<Բյուրակն>> ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագրի, ձեռք են բերվել 498.0 հ/դրամի համակարգչային սարքավորումներ:

2009թ. 5134 <<նախագծահետազոտական ծախսեր>> հոդվածով 500.0 հ/դրամ ծախսվել է վերոհիշյալ նախագծերի կազմման համար:

2010թ. <<Ազգ>> թերթի հունիսի 9-ի համարում, ինչպես նաև <<Գեղամա աշխարհ>> թերթի 10.07.2010թ. թիվ 18-ում /հայտեր չներկայացնելու պատճառով կրկնակի հայտարարություն է տրվել/, ինտերնետ ցանցում, մրցույթ է հայտարարվել՝

ա/ գյուղի փողոցների ջրահեռացման ցանցի կառուցման /կիսախողովակների և վաքերի տեղադրումով/,

բ/ տրանսպորտային վառելանյութերի և պահեստամասերի ձեռքբերման,

գ/ վարչական սարքավորումների և գրասենյակային նյութերի գնման,

դ/ ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման,

ե/ խմելու ջրագծի ընթացիկ վերանորոգման աշխատանքների համար:

Գյուղի փողոցների միայն ջրահեռացման ցանցի կառուցման /կիսախողովակների և վաքերի տեղադրումով/ համար հայտ է ներկայացրել միայն <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ, որի հետ 28.09.2010թ. կնքվել է ԳՄ ՎԳԳ ԱՇՁԲ 10/06 պայմանագիրը: Նախագծային աշխատանքերը կատարել է <<Արևադարձ>> ՍՊԸ, որին վճարվել է 325.0 հ/դրամ:

Համաձայն 20.10.2010թ. թիվ 1 հանձման-ընդունման արձանագրության, 2010թ. հոկտեմբերամսվա կատարողական ակտի /կցվում է/, գանձապետական համապատասխան փաստաթղթերի, <<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ վճարվել է 17961.0 հ/դրամ, որը ձևակերպվել է ֆոնդային բյուջեի 5112 <<շենքերի և շինությունների>> կառուցում հոդվածով:

Այդ նույն հոդվածով, համաձայն ՁՕԸ-ի հետ 23.08.2010թ. կնքված թիվ վգ 08/40 պայմանագրի, <<ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգման 15% համաֆինանսաֆորման նպատակով>>, ֆինանսական ներդրում է կատարվել 1321.1 հ/դրամ: Այսպիսով, ֆոնդային բյուջեի 5112 <<շենքերի և շինությունների կառուցում>> հոդվածով 2010թ. ընդամեն ծախսը կազմել է 19282.1 հ/դրամ:

2010թ. ձեռք են բերվել 207.8 հ/դրամ վարչական սարքավորումներ և 325.0 հ/դրամ նախագծահետազոտական ծախսեր / վերևում նշված <<Արևադարձ>> ՍՊԸ-ին/:

2011թ. 1-ին եռամսյակում ֆոնդային բյուջեից կատարվել են 21.6-ից մինչև 1182.7 հ/դրամ ծախսեր, տարբեր հոդվածներով, ինչպես, օրինակ, էլեկտրոգիայի, կապի, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների, գրասենյակային նյութեր և այլն:






Հանձնարարվեց հաշվապահությանը՝ լուրջ աշխատանքներ տանել սկզբնական հաշվառման փաստաթղթերի գրանցումների, հաշվետվությունների կազմման և ներկայացման, գույքային հարկերի՝ օրենքով սահմանված կարգով ձևակերպումների և այլնի ուղղությամբ, նկատի ունենալով, որ հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով: <<Հաշվապահական հաշվառման մասին>> 26.12.2002թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում, պահպանելով այդ օրենքի բոլոր պահանջները:

Ե Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Առաջարկել մարզի Վ. Գետաշեն համայնքի ղեկավարին՝
1. ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով պահպանել ավագանու նիստերի գումարման, ոչ ուշ քան 2 ամիս մեկ անգամ, պարբերականությունը.
 2. որոշումներով կամ կարգադրություններով հաստատվող հաստիքացուցակներում պահպանել համայնքային ծառայողների պաշտոնների անվանումները՝ համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված անվանացանկի.
 3. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող անհատական կամ լրկալ /ներքին/ իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում, ընդ որում հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները.
 4. ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթներով պահպանել իրավական տեխնիկայի կանոնները.
 5. իրավական ակտերի փոփոխությունները կամ լրացումները իրականացնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով:
 6. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը ենթակա են պարտադիր պետական գրանցման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.
 7. ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով չեղյալ համարել համայնքի ղեկավարի 25.03.2009թ. թիվ 6 և 04.06.2009թ թիվ 18 որոշումները.
 8. Աշխատակազմի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնը համալրել մրցութային եղանակով կամ էլ համայնքի անագանու նիստում քննության առնել այդ պաշտոնի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում թողնելու նպատակահարմարության հարցը:
 9. ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 17-րդ կետի և 40-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով մշակել, հաստատել և պետական գրանցում ստանալուց հետո գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկումների ոլորտի գործունեության համայնքային կանոնները.
 10. ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով հաստատել և գործողության մեջ դնել ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը /սահմանելով ընդունելությունների ժամկետները/:
 11. հաշվապահական հաշվառումը իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան.
 12. վարել համայնքային ծառայողների անձնական գործերի գրանցամատյան:

Առաջարկություն – տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, նախապատրաստել, մարզպետի որոշման նախագիծ և առաջարկել համայնքի ղեկավարին միջոցներ ձեռնարկել տեղ գտած թերությունները կարճ ժամկետում վերացնելու ուղղությամբ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝

 Ի. ԱՍԱՏՐՅԱՆ
3^{րդ} թիվ ՅՈՒ. ԹԱԹԱՐՅԱՆ
 Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
 Հ. ՕՀԱՆՅԱՆ
 Վ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ
 Վ. ՊՈՂՈՍՅԱՆ